

— Սուրեն իշխան, դու շուտ մը ա՛ռ Դաւթի որդին եւ գնա,— ըսաւ,— վասնզի ո՛ր գիտէ եթէ այդ անախտան յոյները յաղթուին, որ շատ հաւանական է, այս ամէն չարիք եւ անզգամութիւնք Կոզովիտ եւ Բագրեւանդ կրնան գործուիլ այդ անողորմ ազգին ձեռքէն: Գնա՛ շուտով, քոյրդ միայն մի թողուր: Ես էլ կ'ուզայի, բայց պէտք է այս գառանաց ջանամ հասնէի թերեւս գերիները կարենամ թափել իրենց մադիկներէն:

Ուստի Սուրեն ու Գրիգոր իրեն խումբով բաժնուեցան զօրավարէն երթալու Կոզովիտ, որ իրօք այն վիճակին մէջն էր հորում երեւակայեց Թեոդորոս:

Արաքք Թեոդորոսի հարուածէն վերջ զօրացեալ ուրիշ դնգաց օգնութեամբ, աւելի զգուշութեամբ եւ խոհեմութեամբ առաջ քայլեցին, եւ իրենց յառաջապահներէն իմանալով յունաց անհոգ դիրքը, չսպասեցին, որ թշնամին իրենց վրայ յարձակի, այլ ամենայն կրօնամոլ կատաղութեամբ յարձակեցան Պրոկոպիոսի բանակին վրայ, որ արդէն իմացած նոցայ պարտութիւնը հայոց գնդէն եւ բանակին փոքրիկութիւնը, ինչպէս հեռուէն նոյնպէս մօտէն արհամարիէր էր գիրենք: Պատերազմը երկար չի քշեց, եւ վաթսուն հազար հոգուոյ բանակ մը տասն հազար արաբացի զօրաց առաջ քանի մը ժամ դիմադրութենէ վերջ չարաչար խորտակեալ կը փախչէր, իր բոլոր բանակը թողլով կապուտ կողոպուտ յաղթողին, որ ամէն բանի տիրանալէ ետք, ասպատակ սփռած ամէն տեղ կավարէր՝ կը քանդէր ըստ իւր սովորութեան, ո՛ր որ ոտքը հասներ:

Մեծ խումբ մը այս բարբարոսաց անտէր անտէրունչ գտնելով երկիրը, որ յունաց այս մեծ կոտորածէն զարհուրէր էր, սփռեցան Կոզովիտ, եւ ինչ որ դիւրամատոյց գտան՝ աւարելէ եւ դերելէ վերջ յարձակեցան Վարդանակերտի աւանին վրայ, որ կատաղի դիմադրութիւն ըրաւ այս անօրինաց, որ յուսահատելով թողին պաշարմունքը: Նոյն միջոցին փոքրիկ գունդ մը, որ Վարդանաբերդի գեղեցիկ շէնքը տեսած հեռուէն եւ չորս կողմը պտոյտներ ըրած էին, մեծ հարստութիւն եւ գանձ յուսալով, եկան խումբին զօրավարին, որ Ալի անունով Շէյխ մ'էր, իրեն առաջարկեցին՝ թէ երկրին տիրոջ ամրոցը հեռու չէր եւ լաւ աւար մը անշուշտ պատրաստ կար եթէ յաջողէին մտնել: Շէյխ Ալի առած իր գունդը եկաւ զննեց բերդը և երբ տեսաւ պարիսպներուն բարձրութիւն եւ ամրութիւնը երկաթապատ դռները, ցաւագին գլուխ մը շարժեց նշան յուսահատութեան: Բայց սատանայական աչքերով երիտասարդ մը նոյն ատեն իրեն մօտենալով.